

РА. Дается оценка тенденциям, сложившимся в аграрном секторе экономики страны. Представлены пути дальнейшего возможного развития экономики сельского хозяйства, основанные на условиях кооперативных хозяйств.

Lena Hovhannisyan  
Liana Azatyan

### On current state of agriculture of Armenia and possible development directions

#### Abstract

The article analyzes main indicators reflecting the dynamics of the growth of the Agriculture in Armenia. The author addresses the trends in the Industry. The article presents the future possible development directions of the Agriculture sector of the economy based of development of cooperatives.

ԱՏՈՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսության կարգավորման &  
միջազգային տնտեսական հարաբերությունների  
ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ

#### ՀԱՐԿԱՅԻՆ ԽԹԱՆՆԵՐԻ ԳԵՐԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ<sup>1</sup>

Ժամանակակից պայմաններում ինչպես ամբողջությամբ վերցրած ազգային տնտեսության այնպես էլ առանձին ընկերության մրցունակության ու դինամիկ զարգացման գլխավոր գրավականը տեխնոլոգիական նորամուծությունների շարունակական կիրառությունն է: Նորամուծությունները բարձր աստիճանի անորոշությամբ ու մեծ ռիսկերով ուղեկցվող գործընթացներ են, որոնց հաջող ելքը շատ դեպքերում պայմանավորված է բարենպաստ ինստիտուցիոնալ պայմաններով: Այս տեսակետից նորամուծությունների բարենպաստ ելքի կարևորագույն նախապայմաններից մեկը պետության կողմից վարվող կարգավորման արդյունավետ քաղաքականությունն է: Ընդ որում՝ միջազգային փորձը վկայում է, որ տնտեսական մրցակցության մեջ լուրջ հաջողություններ են արձանագրում այն երկրների տնտեսական միավորները, որոնք օգտվում են պետության ինչպես ուղղակի, այնպես էլ՝ անուղղակի աջակցության հնարավորություններից:

Հարկային քաղաքականությունը այն կարևորագույն լծակներից է, որն էականորեն ազդում է տեխնոլոգիական և սկսնակ ընկերությունների (**Start-Up**) զարգացման վրա՝ հնարավորություն ընձեռելով նաև ներգրավել զգալի օտարերկրյա ներդրումներ, որոնք իրենց հետևից բերում են նաև նորագույն գիտելիք և կառավարման փորձ: Բազմաթիվ երկրներ, մասնավորապես ասիական մի շարք հաջող զարգացման փորձ ունեցող երկրները կիրառել են այդ լծակը հարկային նվազ դրույքաչափերի, հարկային արձակուրդների և արտոնությունների տեսքով **Start-Up** ընկերությունների և հատկապես վենչուրային ներդրողների համար՝ խրախուսելու սեփական երկրներում մրցունակ տեխնոլոգիական ընկերությունների զարգացումը: Երկրները նաև շարունակաբար վերանայում ու բարելավում են ոլորտի հետ կապված իրենց հարկային ու մաքսային քաղաքականությունները, որոնք սովորաբար կիրառվում են երկու ձևով՝ վերանայելով ընդհանուր հարկման կառուցվածքը, երբ կիրառվում են նվազեցված դրույքաչափեր, ինչպես նաև ոլորտի եկամտահարկի նվազեցումը: Եվ երկրորդը՝ տարատեսակ հարկային խթաններ կարող են կիրառվել յուրահատուկ բիզնեսների համար,

<sup>1</sup> Յողվածը պատրաստվել է ՀՀ ԿԳԻ ԳՊԿ – ՀՀԲՀՀ – 2011, ՔԵ-009 «Յայաստանի և Բելառուսի շուկայի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը, ուղղված երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներգրավմանը, աղապատացմանը և ներդրմանը» թեմայի ֆինանսավորման շրջանակներում

ինչպես, օրինակ վարկերը գիտահետազոտական աշխատանքների համար, որոնք հատկապես կարևոր են վենչուրային կապիտալի ներգրավման համար:

Մեծ հաշվով, խնդիրը հանգում է պետության նորամուծային քաղաքականության արդյունավետությանը: Այս հարցում հղումները միայն կարգավորման անուղղակի մեթոդների նպատակահարմարությանը, մեր կարծիքով, այնքան էլ տեղին չեն: Չարգացած երկրներում հատկապես գիտության ոլորտի նկատմամբ կառավարությունները վարում են ուղղակի աջակցության քաղաքականություն ու այն լրացնում անուղղակի աջակցության բազմակողմանի ու տարաբնույթ գործիքներով: Այդուհանդերձ, մինչև վերջին 1-2 տասնամյակները ընդունված էր համարել, որ նորարարությունների խթանման գործընթացը պետք է աջակցվի ուղղակի պետական ֆինանսավորմամբ: Հատկանշական է, որ բազմաթիվ երկրների նորարարամետ քաղաքականության չափորոշիչների մեջ էական տեղ էր զբաղեցնում ազգային գիտահետազոտական կենտրոններին ու ենթակառուցվածքներին պետության կողմից հատկացվող լրավճարների մեծությունը: Սակայն, ինչպես փորձը ցույց է տալիս, նման սուբսիդավորումը բավականին ծախսատար և դժվար հասանելի է հատկապես թույլ զարգացած և զարգացող երկրների ընկերությունների համար:

Այդուհանդերձ, վերջին տարիներին ազգային նորամուծային քաղաքականության ներդրման հարցում էական դեր է խաղում հարկային օրենսդրական լծակների համարժեք գործադրումը: Նորարարությունների բնագավառի նպատակամետ հարկային խթանման քաղաքականություն են որդեգրել բազմաթիվ զարգացող և զարգացած երկրներ, որոնց հաջողվել է մի շարք խթանող հարկային լծակներով ակտիվացնել նորարարական գործընթացը՝ մասնավորապես նոր տեխնոլոգիաների ներգրավումը, հարմարեցումը և ներդրումը<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, պետք է նախ և առաջ ընդունել, որ իրականում նորարարամետ հարկային քաղաքականության համար գոյություն չունի մեկ ընդհանրական և համապարփակ մոտեցում: Տարբեր երկրներ առաջնություն են տալիս այս կան այն հարկային իրավաօրենսդրական խթաններին, և դրանք հիմնականում ընտրվում են՝ առաջին հերթին հաշվի առնելով տվյալ երկրի զարգացման առանձնահատկությունները: Որպես միասնական ելակետ պետք է ընդունել սակայն, որ բոլոր երկրներում նորարարամետ քաղաքականության հաջողության ակնկալիքով սահմանվում են որոշակի հարկային զեղչեր կամ արտոնություններ՝ հաշվի առնելով տվյալ երկրի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները: Նշված քաղաքականության հաջող իրականացման կարևորագույն նախապայմաններից մեկը կիրառվող օբյեկտի շրջանակների հստակ որոշարկումն է: Մասնավորապես դա վերաբերում է ինովացիոն նախագծերի գիտատեխնիկական նորույթների շրջանակի հստակեցմանը:

Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) մշակված նորմերի համակարգի կամ այսպես կոչված «Օսլոյի ուղեցույցի»՝ ապրանքի կամ գործընթացի **գիտատեխնիկական նորույթը** իր մեջ ներառում է այն ապրանքները և գործընթացները, որոնք տեխնիկապես նոր են և կատարելագործված, ինչպես նաև անցել են որոշակի հարմարեցման շրջան<sup>2</sup>: Հարմարեցված են համարվում այն նոր ապրանքները և գործընթացները, որոնք հաջողությամբ ներդրվել են շուկայում կամ՝ կիրառվել արտադրության գործընթացում:

Նորարարամետ քաղաքականության խթանման ժամանակ գործադրվող հարկային լծակները թույլ են տալիս իրացնել հետևյալ նպատակները.

- բոլոր ընկերություններում անկախ դրանց չափից, բնագավառից և տարածաշրջանից խթանել գիտական հետազոտությունները,
- խթանել նորարարական գործընթացները բարձր տեխնոլոգիաների ոլորտում (բիոտեխնոլոգիա, նանոտեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, այլընտրանքային էներգետիկա, շրջակա միջավայրի պաշտպանություն և այլն),
- զարգացնել երկրի գիտատար փոքր և միջին բիզնեսը,
- աջակցել սկսնակ ընկերությունների (**start-up**) զարգացմանը,

<sup>1</sup> Overview of Singapore Tax Incentives, SINGAPORE TAX INCENTIVES – 2013, Rikvin Pte Ltd <http://www.rikvin.com/taxation/singapore-tax-incentives/>

<sup>2</sup> The Measurement of Scientific and Technological Activities, OECD/EUROSTAT. Oslo Manual. OECD. Paris. 1997.

- խթանել երկրում որոշակի ճյուղերի զարգացումը և այլն:

Վերջին հաշվով, ֆինանսական ռեսուրսներով նորարարական նախագծերի ապահովվածությունը առանցքային նշանակություն ունի երկրի տեխնոլոգիական զարգացման համար: Այս տեսանկյունից ևս երկրի հարկային համակարգը կարող է ստեղծել նպաստավոր պայմաններ՝ նոր ներդրողներին և առկա ձեռնարկություններին սեփական միջոցների ակտիվ վերաներդրումը խրախուսելու նպատակով: Այդպիսի միջոցներից են հարկային հատուկ ռեժիմի կամ արտոնության սահմանումը՝ կապված շահույթի վերաներդրվող մասի, ամորտիզացիոն հատկացումների (հատկապես՝ արագացված ամորտիզացիայի), վնասների փոխհատուցման ապահովագրման հետ: Տնտեսական աճի ավելի լավ հեռանկարներ ունի այն հասարակությունը, որն ընդունակ է ստեղծելու կրթության, գիտության, տեխնոլոգիաների և նորարարության սիներգետիկ համակարգ, երբ փոխգործակցության շնորհիվ համակարգի ընդհանուր արդյունքն ավելի մեծ է, քան նրա մասերի արդյունքների գումարը:

Փաստենք, որ բոլոր զարգացած երկրները ակտիվորեն օգտագործում են պետական կարգավորման անուղղակի մեթոդները, առաջին հերթին՝ հարկային և ամորտիզացիոն գործիքների մեխանիզմները: Այդ մեթոդները հիմնվում են որոշակի արտոնությունների տրամադրման վրա: Մասնավորապես, այդպիսի միջոցներից են գիտահետազոտական աշխատանքների վրա կատարված ծախսերի մի մասի վերագրումը ձեռնարկության արտադրական ծախսերին, հարկերի վճարման հետաձգումը այն ձեռնարկությունների համար, որոնք ներդնում են նոր գիտատար արտադրանք, շահութահարկի նվազեցում, որը համամասնական է ձեռնարկության կողմից գիտահետազոտական աշխատանքների վրա կատարված ծախսերին և այլն:

Հայաստանի Հանրապետության տնտեսության ներկայիս իրավիճակն այնպիսին է, որ հույժ կարևորվում են հարկային ու մաքսային լծակների միջոցով նորագույն տեխնոլոգիաների ինչպես ստեղծման ու ներդրման, այնպես էլ արտաքին շուկաներից դրանց փոխառման գործընթացների արդյունավետ խթանման գործիքակազմի ընտրությունը և գործադրումը: Այս առումով, նախ անհրաժեշտ է դիտարկել այդ բնագավառում առկա լավագույն միջազգային փորձը ու ՀՀ տնտեսության մեջ դրա առավել ուշագրավ տարրերի տեղայնացման հնարավորությունները: Ուսումնասիրելով տարբեր երկրների փորձը խթանող հարկային քաղաքականության համատեքստում հնարավոր կլինի նաև մշակել որոշակի առաջարկներ կամ հանձնարարականներ՝ ուղղված հայաստանյան հարկային նորարարական քաղաքականության ձևավորմանը:

### **Միջազգային փորձի ընդհանուր պատկերը**

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հնարավոր է ճկուն հարկային քաղաքականության և հարկային զեղչերի որոշակի հավաքածուի շնորհիվ խթանել երկրում նորարարությունների ստեղծումը, տարածումը և հարմարեցումը, միևնույն ժամանակ՝ կարճաժամկետում պահպանելով բյուջեի մուտքերը ցանկալի մակարդակում, իսկ երկարաժամկետում՝ էապես ավելացնել դրանք:

Տարբեր երկրներ կիրառում են նորամուծային գործընթացների օժանդակության տարբեր հարկային խթաններ կամ գործիքներ: Դրանցից յուրաքանչյուրը նպատակ ունի որոշակի լրացուցիչ միջոցներ ձևավորել ընկերությունում, որը կուղղորդի ԳՏՀ զարգացմանը: Հարկային զեղչերից կարելի է առանձնացնել լրացուցիչ հարկային զեղչերը, հարկային հետազոտական վարկը, ամորտիզացիան ֆոնդերի հատուկ ռեժիմի սահմանումը, ներդրումային հարկային վարկը, շահույթից հարկային զեղչը և այլն:

Մինչև 1970-ական թվականները եկամտահարկի և շահութահարկի դրույքաչափերը զգալիորեն բարձր էին աշխարհի շատ երկրներում, և արդեն ակնհայտ էր դրանց բացասական ազդեցությունը ընկերությունների դինամիկ զարգացման վրա<sup>1</sup>: Դանդաղել էին այնպիսի մակրոտնտեսական ցուցանիշների աճը, ինչպիսիք էին աշխատուժի վերարտադրությունը և արտադրական ներդրումների ծավալները: Ակնհայտ էր, որ ընկերությունները չունեին բավարար միջոցներ ներդրումներ անելու, ընդլայնվելու և առավել ևս՝ նոր տեխնոլոգիաների կիրառման համար:

<sup>1</sup> **Иванова Н.И.**, Налоговое стимулирование инновационных процессов, Москва 2009, ст. 9.

**ԱՄՆ**-ն առաջիններից էր, որը ամբողջական առաջարկի խթանման շրջանակներում 1980-ական թվականներին սկսեց հարկային զեղչերի միջոցով խրախուսել արդյունաբերության ոլորտի գիտահետազոտական ներուժի զարգացումը: Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ում 1986-2003թթ. հարկային դրույքաչափերը 50%-ից նվազեցվել են մինչև 35%: Ամենաակնառու փոփոխությունը եղել է կորպորացիաների շահութահարկի նվազեցումը՝ 46-48%-ից մինչև 34-35%<sup>1</sup>:

ԱՄՆ-ում կիրառվում է հիմնականում երկու տեսակի հարկային զեղչեր՝ ամորտիզացիոն հատկացումները և հարկային վարկեր հաշվարկված հարկային պարտավորություններից: Հարկային զեղչերի մասին օրենքները ժամանակի ընթացքում անընդհատ շտկվեցին և հարմարեցվեցին ընթացիկ իրավիճակին, որպեսզի առավելագույնս նպաստեն տեխնոլոգիական և նորարարական ներուժի զարգացմանը: Արդեն 1996թ. ուժի մեջ մտավ նաև այլընտրանքային աճողական հարկային վարկը (Alternative Incremental Research Credit, AIRC)<sup>2</sup>, որը նախատեսված է այն ընկերությունների համար, որոնք հնարավորություն չունեն անընդհատ հարկային վարկեր ստանալու, քանի որ իրենց հարկային զեղչերի հաշվարկման բազան առանձին ժամանակահատվածներում կրճատվում է:

ԱՄՆ-ի հարկային վարկավորման ոլորտում հետաքրքիր է նաև առանձին ոլորտների խրախուսման փորձը: ԱՄՆ-ն առանձնացրել է 5 հիմնական ոլորտներ, որտեղ առավել ինտենսիվ էին կիրառվում հարկային զեղչերը: Դրանք էին քիմիական արդյունաբերությունը (ներառյալ դեղագործությունը), էլեկտրոնային տեխնիկայի արտադրությունը՝ ներառյալ հեռահաղորդակցությունը և համակարգչային տեխնոլոգիաները, տրանսպորտային միջոցների արտադրությունը՝ ներառյալ մեքենաշինական և ավիացիոն տեխնիկան, տեղեկատվական տեխնոլոգիաները և մասնագիտացված ծառայությունները: Այդ ոլորտները միասին գրավեցին ամբողջ հարկային վարկի 80%-ը, որոնք առանձնացվել էին ԱՄՆ-ի կառավարության կողմից հռչակված գիտատեխնոլոգիական և նորարարական քաղաքականության խթանման շրջանակներում<sup>3</sup>:

ԳՏՀ զարգացմանն ուղղված հարկային խթանները **Եվրոպայում** սկսել են կիրառվել վերջին երկու տասնամյակում: Չնայած որ 2007թ. արդեն եվրոպական 15 երկրներ կիրառում էին նորարարական հարկային քաղաքականություն, սակայն ոչ բոլոր երկրներում է այն հանդիսացել որպես պետության ԳՏՀ զարգացմանն ուղղված քաղաքականության հիմնական գործիք: Եվրոպական մի շարք երկրներում, ինչպիսիք են Իսպանիան, Պորտուգալիան հարկային խթանները վճռական դեր են ունեցել ԳՏՀ զարգացման գործում, մինչդեռ մի շարք այլ երկրներում (Գերմանիա, Իտալիա, Բելգիա) դրանց կիրառումը տնտեսությունում էական փոփոխության չի հանգեցրել: Նման երկրներում առավել էական են եղել նորամուծությունների ուղղակի աջակցման միջոցառումները: Միևնույն ժամանակ երկրների մի մասը միաժամանակ կիրառում է և՛ անուղղակի (հարկային) և՛ ուղղակի խթանման միջոցներ (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա):

Եվրոպական երկրներից կարելի է նախ և առաջ առանձնացնել **Ֆրանսիան**, որը վերջին տարիներին սկսել է իրականացնել ակտիվ քաղաքականություն՝ հատուկ հարկային խթանների օգնությամբ նորարարությունների զարգացման համար: Արդեն 2008թ. կառավարությունը հայտարարում է գիտության և բարձրագույն կրթության աջակցումը որպես բյուջետային առաջնային քաղաքականություն և 39.5 միլիարդ եվրո ներդրում է կատարում ԳՏՀ զարգացման ոլորտում (ՀՆԱ-ի 2.1%)<sup>4</sup>: Որպես նորարարությունների զարգացման ռազմավարական ուղղություններ առանձնացվել են կենսատեխնոլոգիաները, էկո- և նանոտեխնոլոգիաները: Ֆրանսիայում մեծ տեղ է հատկացվում նաև ԳՏՀ խթանման անուղղակի մեթոդներին, մասնավորապես հարկային լծակներին: Ֆրանսիայի հարկային քաղաքականության գործիքակազմի յուրահատկությունը պայմանավորված է մեծմասամբ դրանց կիրառման առանձնահատկություններով:

2000-2002թթ. **Մեծ Բրիտանիայում** սահմանվել են նորարարությունների զարգացմանն ուղղված մի շարք հարկային զեղչեր փոքր և միջին բիզնեսի ոլորտում: Դրանք հետագայում ներդրվեցին նաև խոշոր բիզնեսի ոլորտում: Ներկայումս Մեծ Բրիտանիայում կիրառվում են ԳՏՀ հարկային խթանման

<sup>1</sup> Tax Incentives for Innovation in the United States, USA Innovation Tax Incentives (BHH Draft) 15 January 2001, page 6-7.

<sup>2</sup> **Տե՛ս** նույն տեղը, էջ 7:

<sup>3</sup> **Տե՛ս** F.Moris "The U.S. Research and Experimentation Tax Credit in the 1990s". U.S. Internal Revenue Service, Statistics of Income program InfoBrief. Science Resources Statistics. NSF 05-316. July 2005.

<sup>4</sup> **Տե՛ս** France's Action to Promote Innovation, Directorate-General of Global Affairs, Development and Partnerships, 2010, էջ 2:

երեք հիմնական լծակներ՝

- ԳՏՀ ծախսերի հարկման դրույքաչափերի նվազեցումը:
- Շահույթ չստացող փոքր կազմակերպությունների ԳՏՀ ծախսերի ուղղակի փոխհատուցումը:
- Հարկային զեղչերը այն կազմակերպություններին, որոնք իրականացնում են վարակիչ հիվանդությունների համար պատվաստանյութերի հետազոտություններ:

Ըստ մասնագետների գնահատականի՝ հարկային զեղչերը փոքր և միջին ձեռնարկություններում թույլ են տալիս կրճատել ԳՏՀ ծախսերը մինչ 15.75%, իսկ խոշոր ձեռնարկություններում՝ մինչև 8,4%<sup>1</sup>: Շահույթ չունեցող ընկերությունները կարող են ստանալ շուրջ 24.5% փոխհատուցում ԳՏՀ ծախսերի դիմաց: 2008թ. հետազոտությունները ցույց տվեցին, որ ընկերությունները սկսել էին ավելի դրական արձագանքել հարկային զեղչերին, և այդ պայմաններում ԳՏՀ ծախսերը ի հաշիվ հարկային զեղչերի 4%-ից աճել էին 8%-ի<sup>2</sup>:

Անուղղակի միջոցներով, մասնավորապես՝ հարկային լծակներով, նորամուծություններ ուղարկի խթանման հետաքրքիր փորձ է կուտակել Ճապոնիան: Այդ երկրի հարկային լծակների համակարգի բաղկացուցիչ մասն է համարվում «Հատուկ հարկային միջոցառումների մասին» օրենքը<sup>3</sup>, որը թույլ է տալիս կառավարել երկրի արդյունաբերության գիտական հատվածի կառուցվածքը և զարգացման տեմպերը: Այդ օրենքը ներառում է հարկային զեղչերի համակարգ, որը տրամադրվում է մասնավոր հատվածի ընկերություններին՝ հետազոտություններ և փորձարարական գործունեություն իրականացնելու համար:

2000թ. ընդունվեց արդյունաբերական տեխնոլոգիաների զարգացմանը ուղղված ազգային ռազմավարություն, որը նպատակ ուներ ամբողջությամբ վերակազմավորել երկրի նորարարական համակարգի կառուցվածքը՝ նպաստելով տեխնոլոգիական նմանակման (իմիտացիա) ռեժիմից դեպի սեփական գիտական մշակումներին անցմանը: Այս նպատակով 2003–2006թթ. ներդրվեց 12%-անոց հատուկ «հարկային վարկը»՝ ֆիրմայի գիտահետազոտական ծախսերը հոգալու համար: Որպես լրացուցիչ խթան, որը կնպաստեր բիզնեսի ոլորտում գիտության զարգացմանը 2006-2008թթ. բոլոր ընկերություններին առաջարկվել էր 5% հարկային վարկ, որը կտրամադրվեր յուրաքանչյուր լրացուցիչ հետազոտական բաժին ստեղծելու համար: Եվս մեկ խթան էր 12%-ոց հարկային զեղչը, որը տրամադրվում էր արդյունաբերական ընկերություններին ու համալսարաններին կամ ազգային հետազոտական ինստիտուտների միջև համատեղ հետազոտական և գիտական փորձարկումներ իրականացնելու համար<sup>4</sup>:

Միջազգային հարուստ փորձի դիտարկումը կարելի է սահմանափակել Չինաստանի և Մինգապուրի օրինակներով: Չինաստանը համարվում է նորարարամետ քաղաքականությամբ դինամիկ զարգացող երկիր, որի նպատակն է համաշխարհային շուկայում առաջնություն ձեռք բերել տեխնոլոգիամետ նորարարությունների ոլորտում: Մասնավորապես հարկային խթանման քաղաքականությունը դրսևորվում է բազմաթիվ տարբերակներով՝ սկսած հարկային վարկերից մինչև շահութահարկի զեղչեր, ԳՏՀ ծախսերի խթանում և տեխնոլոգիական սարքավորումների նորացման խրախուսում: Ընդ որում, եթե տարիներ առաջ հարկային լծակները ուղղված էին շահութահարկի և ԱԱՀ-ի մակարդակի իջեցմանը, ապա այժմ հիմնական շեշտը դրվում է հարկման բազայի ընդլայնման և հարկային վարկերի խոշոր զեղչերի մասին<sup>5</sup>:

Մինգապուրի կառավարությունը իր հերթին ակտիվ դեր է խաղում երկրի տնտեսական զարգացման գործում՝ բիզնեսին տրամադրելով ֆինանսական արտոնություններ: Այսպես անդրազգային կորպորացիաների ներգրավման դեպքում Մինգապուրը ներդրման առաջին 10 տարվա ժամանակահատվածի համար սահմանել է ընդամենը 10%-ոց շահութահարկ: Մինգապուրի կառավարությունը ներդրել է հարկային զեղչերի փաթեթ, որոնք մեծ ազդեցություն ունեն բիզնեսի վրա: 2008թ. եկամտահարկի մասին օրենքը (Income Tax (Amendment) Act 2008)<sup>6</sup> ենթարկվեց որոշակի

<sup>1</sup> Chris Cassley, Impact of the R&D tax credit, adding value, reducing costs, investing for the future CBI. Brief. February 2009, p. 5

<sup>2</sup> Н.И. Иванова, Налоговое стимулирование инновационных процессов, Москва 2009, էջ. 73

<sup>3</sup> Grant Thornton, Quarterly newsletter on important tax and business developments in Japan, Japan tax bulletin, July 2009

<sup>4</sup> Տես նույն տեղը:

<sup>5</sup> Taxation and Investment in China 2012, Publication of Deloitte.

<sup>6</sup> Taxation and Investment in Singapore 2012, Publication of Deloitte.

փոփոխությունների, որոնցով նորարարական ընկերություններին տրամադրվում են հարկային զեղչեր: Օրինակ՝ սեփական (կորպորատիվ) գիտության և հետազոտության մեջ յուրաքանչյուր 100 դոլար ներդրման դեպքում ընկերությունը իրավունք է ստանում հարկման ենթակա եկամուտը կրճատել 150 դոլարով: Ինչ վերաբերում է սկսնակ բիզնեսներին, ապա այդ դեպքում տրամադրվում են հարկային արձակուրդներ, որոնք կարող են հասնել մինչև 15 տարի: Բացի դրանից, այն ընկերությունը, որը առաջին անգամ է գրանցվում երկրում, առաջին 3 տարվա ընթացքում ազատվում է շահութահարկից 100 հազար սինգապուրյան դոլարի չափով:

### **Նորարարման հարկային քաղաքականության խնդիրները ՀՀ-ում**

Հայաստանում դեռևս չի ձևավորվել մի այնպիսի հարկային քաղաքականություն, որն ունակ լինի ստեղծել գրավիչ միջավայր բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացման համար: Դեռևս չկա նաև այն օրենսդրական ենթակառուցվածքը, որը հրապուրիչ կլինի գլոբալ վենչուրային կապիտալի համար, ինչը ունակ կլինի ֆինանսավորել նորարարական ռիսկային Start-Up նախագծերը: Հարկ է սակայն նշել, որ, առանձին վերցրած, միայն հարկային միջավայրի փոփոխությունը նվազ արդյունքի կհանգեցնի, եթե այն շաղկապված չլինի տեխնոլոգիական զարգացման միասնական ռազմավարության մշակման և իրականացման հետ՝ ներառյալ կրթությունը, գիտությունը, ներքին և արտաքին սպառման շուկաները և պետական արդյունավետ կարգավորումը, մասնավորապես մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը:

Փաստենք, որ տեխնոլոգիական-ինովացիոն զարգացման խթանման տեսանկյունից ՀՀ ներկայիս հարկային համակարգը տարբերակված մոտեցում չի ցուցաբերում, սակայն առաջարկում է մի շարք արտոնություններ ներդրողներին, որոնք ընդհանուր առմամբ վերաբերում են նաև տեխնոլոգիական կամ ինովացիոն բնագավառի ընկերություններին: Մասնավորապես, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը շահութահարկի գծով ընկերության պարտավորությունը որոշելիս կատարված գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների մասով նվազեցում է կատարում: Համաձայն հիշյալ օրենքի 15-րդ հոդվածի՝ «հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերի չափով՝ այդ ծախսերի կատարման տարվա ընթացքում ամբողջովին»<sup>1</sup>: Այսպես, 500 միլիոն դրամը գերազանցող օտարերկրյա ներդրումները երկու տարով ազատվում են շահութահարկից, իսկ հետագա 8 տարիներին շահութահարկ վճարում են 50 տոկոսով, նրանցից չեն գանձվում մաքսատուրքեր հիմնադիր կապիտալի և ներկրվող հումքի վրա, իսկ «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքը հինգ տարի ժամկետով ներդրումները պաշտպանում է անբարենպաստ փոփոխություններից: Բացի այդ, տարեկան հարկային վնասները տեղափոխվում են հաջորդ ֆինանսական տարի: Գործում են նաև արտոնություններ արտահանողների համար, օրինակ բացակայում են արտահանման տուրքերը, արտադրանքի և ծառայությունների արժեքի մեջ առկա ԱԱՀ-ն ենթակա է վերադարձի<sup>2</sup>:

2010 թվականին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով 300 մլն դրամ և ավելի ներդրում կատարելու դեպքում ընկերությունների կողմից վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետները երեք տարի ժամկետով հետաձգելու արտոնություն է տրամադրվել:

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի պատվերով ՀՀ-ում տեխնոլոգիական ընկերություններում իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ ոլորտի քանակական և որակական աճին խոչընդոտող ամենակարևոր գործոնն՝ ըստ տվյալ ոլորտը ներկայացնող ընկերությունների, դա տեխնոլոգիական բուհերի շրջանավարտների անբավարար որակավորումն է, որին հաջորդում են ֆինանսավորման աղբյուրների, պետական աջակցության և ոլորտի ազգային ռազմավարության բացակայությունը և ոլորտի հարկային դաշտի անկատարությունը<sup>3</sup>: Անհրաժեշտ է

<sup>1</sup> «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը: Ընդունված ԳՀ ԱԺ կողմից 1997թ. սեպտեմբերի 30-ին:

<sup>2</sup> <http://parliament.am/legislation.php?sel=alpha&lttype=3&lang=arm#21>

<sup>3</sup> <http://www.arlis.am/documentview.aspx?docid=73140>

<sup>3</sup> Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ. 2011 թ. հետազոտություն: [http://www.mineconomy.am/uploads/Industry\\_Report\\_2011.pdf](http://www.mineconomy.am/uploads/Industry_Report_2011.pdf)

նաև նշել, որ հարկային դաշտի գործոնը սերտորեն կապված է նաև ֆինանսական միջոցների ներգրավման և պետական աջակցության գործոնների հետ: Այսինքն ներդրումային միջոցների ներգրավման համար բարենպաստ դաշտ ստեղծող և ոլորտի ազգային ռազմավարությունից բխող հարկային կարգավորումը, ինչպես և նոր որակյալ մասնագետների համակարգը ՀՀ-ում ինովացիոն-տեխնոլոգիական զարգացման կարևորագույն գործոններից է:

ՀՀ-ում SS ոլորտի հիմնական մաքսային դժվարությունները կապված են SS ապրանքների ներմուծման հետ, երբ ներկրողը հավելյալ ծախսեր է կրում՝ անարդյունավետ վարչարարության, մաքսային օրենսգրքում SS և բարձր տեխնոլոգիական ապրանքների համար ոչ հստակ սահմանումների պատճառով: Երբեմն հնացած ապրանքների դասակարգման բազան կարող է առաջացնել խնդիրներ: Վիճարկելի են նաև գնորդչման մեթոդները, հատկապես տեխնոլոգիական բարդ ապրանքների համար, որոնք ազդում են վճարվող ԱԱՀ-ի չափի վրա, քանի որ հաճախ մաքսային մարմինները կարող են չճանաչել արտադրողի հավաստագիրը և դրանում նշված գինը:

Հարկային քաղաքականության մեջ, ընդհանուր առմամբ, հարկավոր են այնպիսի փոփոխություններ, որոնք խրախուսեն նորամուծություններ պարունակող բիզնես-ծրագրերից շահույթների ստացումը: Այս առումով հատկապես վեճարարային ֆինանսավորման վրա հիմնված նորարարական ընկերությունների շահույթների հարկումը, անկասկած, պետք է իրականացնել զեղչման ռեժիմով կամ ընդհանրապես ազատել հարկումից այն դեպքում, երբ ստացված շահույթները կրկին վերաներդրվում են այդ ընկերությունների հետագա ընդլայնման մեջ (գիտահետազոտական ծրագրերի ֆինանսավորում, նոր սարքավորումների և տեխնոլոգիաների ձեռքբերում, փորձանմուշների փորձարկում, շուկաների որոնում և հատվածավորում, նորամուծությունների կառավարման գծով մենեջերների ուսուցում ու նորերի վարձում և այլն): Մյուս կողմից, վեճարարային ֆինանսավորման վրա հիմնված ընկերությունների հարկումը կարող է կատարվել վերջնական եկամուտներից: Բոլոր դեպքերում, նման հիմնադրամների հարկումը պետք է ունենա խթանող ուղղվածություն և ոչ թե զուտ ֆիսկալ նպատակներ հետապնդի, ինչպես սովորական բիզնեսների դեպքում է:

Մինչդեռ, ՀՀ հարկային օրենսդրությունը, որպես կանոն, նման խնդիրների լուծման նպատակ չի հետապնդում: Ասենք, շահութահարկի հաշվարկման ընթացքում այնպիսի ծախսեր, ինչպիսիք են փորձարարության, գիտահետազոտական սարքավորումների ձեռքբերման կամ մարքեթինգային հետազոտությունների վրա կատարված ծախսերը, ոչ մի կերպ չեն ներառվում եկամուտների նվազեցումների մեջ: Մինչդեռ, նորամուծություններ իրականացնող ցանկացած ընկերության համար հենց այդ ծախսերն են հիմնական: Մյուս կողմից, հենց հարկային ծանր բեռի պատճառով ստվերում «թաքնված» ընկերություններին գտնելու դժվարությունները խոչընդոտում են ռիսկային ֆինանսավորմանը:

Նորամուծությունների հարկման համակարգը միաժամանակ ռիսկային ֆինանսավորում ենթադրող ձեռնարկչության պլանավորման տեսանկյունից, պետք է լինի կանխատեսելի: Այսինքն, սահմանված հարկման կանոնները պետք է լինեն կայուն և տևական հեռանկարին միտված: Այլ կերպ, սահմանված հարկերը պետք է մեծ ռիսկ պարունակող ներդրողներին հնարավորություն տան բիզնեսի տարբերակները մշակել՝ ելնելով որոշակի այլընտրանքների առկայությունից: Այսինքն՝ հարկերը ամրագրվեն ոչ թե բացարձակ միարժեքությամբ, այլ՝ կախված ռիսկային գործարար նախագծի ելքի աստիճանից, ասենք, որոշակի միջակայքում, օրինակ, շահութահարկի դեպքում՝ 5-10 տոկոսի սահմաններում:

Բացի այդ, հարկավոր է վեճարարային հիմնադրամների կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար բացառել հարկային օրենքների հետադարձ ուժը, եթե դրանք ի վնաս են արդեն կատարված ռիսկային ներդրմանը: Ընդհանուր տնտեսական օրենսդրության կատարելագործումը ևս կարող է լուրջ խթան դառնալ վեճարարային հիմնադրամների ձևավորման ճանապարհին: Այստեղ կարևորվում է ոչ միայն ընդհանուր օրենսդրության զարգացումը, այլև՝ հենց ռիսկային ներդրումներին միտված օրենքների մշակումը և կիրառումը:

**The role of tax incentives in the system of technology transfer factors**

**Abstract**

The article deals with international practices applied in innovation-oriented fiscal policy and the possibility of adopting these tools and instruments by the Republic of Armenia. In particular, the article examines the possibility of using fiscal instruments such as research and development tax incentives, research tax credits, special depreciation rules for innovative companies, investment tax credits, income tax rebates, and etc.

**Атом Маргарян**

**Роль налоговых стимулов в системе факторов трансфера технологий**

**Аннотация**

В статье рассматриваются международный опыт инновационно ориентированной налоговой политики и возможности локализации ее элементов в Республике Армения. В частности, изучены возможности использования таких налоговых инструментов, как налоговые льготы для научных исследований и опытно-конструкторских работ, исследовательский налоговый кредит, специальный режим амортизационных отчислений для инновационных компаний, инвестиционные налоговые кредиты, скидки по налогу на прибыль и т.д.